

# ՄԵՍՐՈ՞Պ, ՄԱՇԹՈ՞Յ, ԹԷ ՈՒՐԻՇ ԱՆՈՒՆ

Երեսուներկինգ տարի առաջ էր, Խասգիւղի Ներսիսեան վարժարանի ուսանողութեան շրջանիս, երբ իրիկուն մը՝ դպրոցէն տուն դարձիս, Ս. Ստեփաննոսի բակէն կ'անցնէի, Տ. Հիւնքեարպէյէնտեան բանասէր քահանան, որ իր ժամարարի շրջանը անցընելու համար եկեղեցւոյ խուցը կ'մնար, զիս ներս կանչեց, եւ զիւտ մ'ընողի ժպիտով, բացաւ երկու մեծահատոր բառարաններ.

«Տե՛ս, տղա՛ս, սա՛ արարերէն مشرف (Միշ-  
րիֆ) բառը, որ ՍՐԲՈՒԹԻԻՆ, ՍՐԱԱԶՆՈՒԹԻԻՆ  
«կ'նշանակէ, տառադարձութեամբ ՄԵՍՐՈՊ եղած  
«է Հայերէնի մէջ. Իսկ Յունարէն սա՛ Մաս-  
«թոս» բառէն ալ՝ որ նոյնպէս ՍՐԲՈՒԹԻԻՆ,  
«ՍՐԱԱԶՆՈՒԹԻԻՆ (Eminence)(\*) կ'նշանակէ,  
«յօրինուած է Հայերէն ՄԱՇԹՈՅ բառը. Ակներեւ  
«է որ Հայ տառերը գտնող երանաշնորհ վարդա-  
«պետին բուն անունն ո՛չ ՄԵՍՐՈՊ է, ո՛չ ՄԱՇ-  
«թՈՅ. Ասոնք պատուանուններ են, ինչպէս ՀԱՅՐ  
«ՍՈՒՐԲԸ կամ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻԻՆԸ, որ սովորա-  
«բար կ'արուէին իրեն, եւ որոնք՝ կ'երեւի թէ  
«ժողովուրդին բերնին մէջ յարատեւ յեղաշրջու-  
«մով, մոռացութեան մատնել տուած են վար-  
«դապետին բուն անունը, եւ դարերու նուիրա-  
«գործումով՝ սոյն պատուանունները իբր այն ա-  
«ւանդուած են մեզի. Հարկ է ուրեմն որոնել եւ  
«գտնել թէ ի՞նչ եղած է Մեսրոպ ու Մաշթոց  
«անունով ճանչցուած վարդապետին բուն ա-  
«նունը, որուն այնքան շնորհապարտ է ազգն  
«համօրէն.»

Տօնական Մեծ Շարթուան առթիւ, շահեկա-  
նութենէ զուրկ չպիտի ըլլայ սոյն հին յիշատակ-  
ները քրքրած ըլլալս, Հիւնքեարպէյէնտեան քա-  
հանայի սոյն ստուգաբանական տեսութիւնը՝ իմ  
կողմէս առանց ո եւ իցէ մեկնաբանութեան, ձե-  
ռնհասներու զնահատման ներկայացնելու համար.

Ա. Խ. Գ-Լ-Ն-Բ-Է-Ն-Յ

ՄԱՆ. ԽՄԲ.—Պատմութիւնը կ'աւանդէ  
թէ Ս. Մեսրոպի աւազանի անունն էր  
Մաշթոց, որ յետ ձեռնադրութեան փոխ-  
ուեր է Մեսրոպի: Գալով արար. Միշ-  
րիֆ բառին, իբր իսմի ֆայիլ Իյրաֆի,  
ասիկա թէ՛ իմաստի թէ պատմութեան  
տեսակէտով խնդրական է, որովհետեւ Ս.  
Դարուն սկիզբն Հայք դեռ ևս Իսլամու-  
թեան չյարած Արաբաց հետ հաղորդակ-  
ցութեան մէջ չէին: Արդէն Իյրաֆ և  
Միշրիֆ անսովոր են, Միշէրրէֆ ը-  
սել կ'ուզէ, որ Մեսրոպին հետ «գա-  
ֆիյէ» չըլլար: Եթէ Հ. Հիւնքեարպէ-  
յէնտեան ասորերէնէ վկայութիւն բե-  
րէր, աւելի մտիկ կ'ըլլուէր: Յոյն բառը  
Մասթոս աւելի ընդունելի է, ածական  
մը կամ պատուանուն մը իբր յատուկ ա-  
նուն ի կիր առնուած կրնայ ըլլալ: Յի-  
շելով որ մեր Ս. նախնիք ո՛րչափ զբա-  
ղեր են Ս. Մեսրոպի անունով ու գործե-  
րով, եթէ ուրիշ անուն մը, իսկական  
անուն մ'ունենար, հարկաւ գէթ մին  
կ'լսէր ու կ'գրէր: